ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգով
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կապարակնիքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 27.05.2016թ. N 1/27-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.06.2016թ. ժամը 10-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Ղազարյանը, Վ.Սահակյանը, Ա.Աֆրիկյանը, Կ.Գևորգյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Գնահատող հանձնաժողովի աշխատանքները վերսկսելու և հայտերի գնահատման մասին

ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.06.2016թ. թիվ-1/18-2/[1127654]-16 գրությամբ /կցվում է/ դիմել էր ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությանը՝ «Մեդարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում տեղ գտած անհամապատասխանության պարզաբանման նպատակով: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունը պատասխանել է 22.06.2016թ. թիվ-11-1/[1132503]-16 գրությամբ/գրությունը կցվում է/:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության կողմից ուղարկված գրությունը գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:
Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց «Մեդարտ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ վճարման պահանջագրի լրացման կարգի խախտման հիմքով, մասնավորապես մասնակիցը վճարման պահանջագրի 13-րդ կետում չի նշել արտարժույթի կոդը, որը պարտադիր պայման է:
ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգը համաձայն՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Արշակյան

Անդամներ՝ Հ.Ղազարյան

Վ.Սահակյան

Ա.Աֆրիկյան

Կ.Գևորգյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգով
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կապարակնիքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 27.05.2016թ. N 1/27-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.06.2016թ. ժամը 16-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Ղազարյանը, Վ.Սահակյանը, Ա.Աֆրիկյանը, Կ.Գևորգյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և ուսումնասիրության մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Վ.Արշակյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Մեդարտ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Նոր Նորքի 3-րդ միկրոշրջան, Գայի պող., 29-27 շենք)
-ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 14.06.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

-«Մեդարտ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«Մեդարտ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	**Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ**
		«Մեդարտ» ՍՊԸ
1	**Կապարակնիք-1** <<Ակուլա Մ>> կամ «Դրակոն –Մ» կամ համանման տեսակի կապարակնիք A 0400001-A0550467	9148759.45
2	**Կապարակնիք-2** Ինքնասոսնձվող դրոշմանիշեր- 0000001-0071000	3550142
3	**Կապարակնիք-3** Ունիվերսալ պլաստիկ կարմիր(G 0100001-G0130000	1200048

4	**Կապարակնիք-4** Ունիվերսալ պլաստիկ դեղին M 0700001-M0720000	800032

*«Մեդարտ» ՍՊԸ-ն՝ ԱԱՀ վճարող չէ:

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

-Հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքում արձանագրեց, որ «Մեդարտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ վճարման պահանջագրի (Վճարողի ՀԾՀ) կետը լրացված է, սակայն 05.05.2016թ. թիվ 54-Ա հրամանով հաստատված «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու» մասին հրամանի պահանջների համաձայն 7-րդ կետը լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ:

Հաշվի առնելով, վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը կասեցնել և տվյալ գնման ընթացակարգի հետագա ընթացքը ապահովելու համար պարզաբանման նպատակով գրությամբ/կցվում է/ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությանը:
- ՊԵԿ-ԲԸՀ-ԱՊՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը վերսկսել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության կողմից պատասխան գրությունը ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Արշակյան

Անդամներ՝ Հ.Ղազարյան

Վ.Սահակյան

Ա.Աֆրիկյան

Կ.Գևորգյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան